ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 4-00-01, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2018 թվականի N16-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 2018թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարումը ընթացել է հետևյալ ցուցանիշներով՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Համայնքի 2018թվականի 1-ին եռամսյակի բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 97.6%-ով՝ 143.2մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 139.8մլն. դրամ: Նախորդ՝ 2017թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 18.9 %-ով, կամ ավել եկամուտները կազմել են 22.2մլն. դրամ:

2018թվականի 1-ին եռամսյակի բյուջեի վարչական մասը կատարվել 100.6%-ով / պլան՝ 128.2մլն. դրամ, փաստացի՝ 128.9մլն. դրամ /: 2017թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի 2018թվականի առաջին եռամսյակի վարչական մասում ավելացված եկամուտները կազմել են 0.7մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2017թվականի համեմատությամբ ավելացել են 0.6%: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 101.7%-ով / պլան՝ 43.0մլն. դրամ, փաստացի՝ 43.7մլն. դրամ /: Նախորդ՝ 2017թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 53.7%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումն ավելացել 15.3մլն. դրամով:

2018թվականի 1-ին եռամսյակի ֆոնդային բյուջեն կատարվել է 72.2%-ով / պլան՝ 15.0մլն. դրամ, փաստացի՝ 10.8մլն.դրամ/: 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացել են 7.8մլն. դրամ կամ 2.5 անգամ: Նախորդ՝ 2017թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական բոլոր եկամտատեսակների գծով ապահովվել է աճ, ընդհանուր 15.3 մլն. դրամ:

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2018թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ծախսերը:

Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 67.4%-ով: 154.7մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց կատարվել է 104.3մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 50.4մլն. դրամ, որը պայմանավորված է ՀՈԱԿ-ների հունվար-փետրվար ամիսների չաշխատելով:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2018թ. բյուջեի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել են տարբեր տոկոսներով:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 71.2%-ով / 132.2 մլն. դրամ՝ պլան, 94.1 մլն. դրամ՝ փաստացի ծախս/: Թերակատարումը կազմել է 38.1մլն. դրամ, այդ թվում՝ 5.1մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 21.3մլն.դրամ՝

կրթության և մշակույթի ծախսեր, 0.8մլն. դրամ սոցիալական այլ ծրագրերի գծով ծախսեր, 10.9մլն. դրամ պահուստային ֆոնդի ծախսեր և այլն:

Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են միջին հաշվով 66.3%:

2017թվականի 1-ին եռամսյակի համեմատությամբ 2018թվականի նույն ժամանակահատվածում վարչական բյուջեի ծախսերը պակաս են կատարվել 38.1մլն. դրամ կամ 28.8%-ով:

2018թվականի 1-ին եռամսյակի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 33.3%-ով /պլան՝ 34.7մլն. դրամ, փաստացի ծախս՝ 11.5մլն. դրամ/: Նախորդ՝ 2017թվականի 1-ին եռամսյակի համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսեր են կատարվել 11.2մլն. դրամ, կամ մոտավորապես 3.7 անգամ:

ՊԱՐՏՔԵՐ

Համայնքի բյուջեի գծով պարտքերը 01.01.2018թ. դրությամբ կազմել են 77.2մլն. դրամ, այդ թվում՝ փողոցների փոսային նորոգման գծով՝ 72.5 մլն. դրամ, այլ պարտքեր՝ 4.7 մլն. դրամ:

01.04.2018թ. դրությամբ համայնքի բյուջեի պարտքերը կազմում են 66.2 մլն. դրամ, 1-ին եռամսյակի ընթացքում փողոցների փոսային հիմնանորոգման պարտքերը մարվել են 11.0մլն. դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի 2018թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդագրությունը / թիվ 1, 2 հավելվածները կցվում են /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ-0

1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ

3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ

7. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 4-00-01, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2018 թվականի N17-Ն

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համայնքի 2018թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
2. Ծառերի էտման ծառայությունների ձեռքբերում /բաժին 05, խումբ 4, դաս 1, հոդված 4239/, ավելացնել 1000.0 հազ. դրամ հաստատել տարեկան 1000.0 հազ. դրամ.
3. Սուբսիդիա «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ /բաժին 09, խումբ 5, դաս 1, հոդված 4511/, պակասեցնել 1000.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 18500.0 հազ. դրամ.
4. Հաստատել համայնքի բյուջեի ճշտված 2-3 հատվածները:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ-0

1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ

3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ

7. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

9. ՂԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 4-00-01, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2018 թվականի N18-Ա

«ԳԵՂԱՄԱ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «Գեղամա» համատիրությանը հատկացնել ք. Սևան, Կ. Դեմիրճյան 17 հասցեում գտնվող թիվ 1 «Բողբոջ» մսուր-մանկապարտեզի շենքից 28.0քմ տարածք՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ-0

1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ

3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ

7. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 4-00-01, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2018 թվականի N15-Ա

Հարցման կարգով

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16)-րդ ենթակետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ ենթակետի պպահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, ք. Սևան, Նաիրյան փողոց 175 շենք, 44 բնակարանը / վկայական՝ 27032018-05-0046 / անհատույց սեփականության իրավունքով նվիրել ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 / 44 բնակարանի բնակիչ Մանուկ Հակոբի Սարգսյանին:
2. Քաղաքացի Մանուկ Սարգսյանի հետ կնքել բնակարանի նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ-0

1.ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

2.ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ

3.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ

7. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ